Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Սյունիքի մարզի <<Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի Հայոց եկեղեցու պատմության (9 դասաժամ), Հայրենագիտության (2 դասաժամ), Պատմության (4 դասաժամ), Ֆիզիկայի (9 դասաժամ), Ինֆորմատիկայի (8 դասաժամ), Տեխնոլոգիայի (3 դասաժամ), Բնագիտության (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1.Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),

2.Փաստաթուղթ (դիպլոմ)՝ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3.Անձնագրի պատճենը,

4.Ինքնակենսագրություն (Ձև 4),

5.Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացնող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6.Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7.Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թ. ապրիլի 4-ից մինչև ապրիլի 17-ը ամեն օր՝ ժամը 10.00-15.00՝ բացի շաբաթ և կիրակի օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2023թ. ապրիլի 21-ին ժամը 14.00-ին Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ /0285-2-55-92/ հեռախոսահամարով: